



Կ. Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐՆ ՈՒ ԹՂԹԵՐԸ ՈՐՊԵՍ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԱՆԻՑ ԱԾԽԱՐՀԻ» ԵՐԿԻ ԱՂԲՅՈՒՐ

«Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկը միջնադարյան հայ մատենագրության բարձրարժէք գործերից է: 10-րդ դարում Մովսէս Դաւիթբեկեան կողմից շարահարկով աշխարհ գրքի մեջ զետեղված են նախընթաց շրջանի հայ մի շարք հեղինակների ինքնուրույն ստեղծագործություններ ու մանր ժամանակագրություններ, հայ պատմիչների երկերից քաղված տեղեկություններ ու ամբողջական դրվագներ, եկեղեցական վավերագրեր ու թղթեր, վարքեր և այլն: Գրքի մեջ անփոփոխ կամ անմշան փոփոխություններով ներառված այդ նյութերից շատերը՝ Վաչագան Բարեպաշտին նվիրված պատմությունը (5-րդ դ.), Վեհիկի տեսիլը (6-րդ դ.), Վիրո կաթողիկոսի հեղինակած պատմությունը (7-րդ դ.), Զիվանշիր իշխանին փառաբանող գործը (7-րդ դ.), Դավթակ Քերթոռլի ողբ-պոեմը (7-րդ դ.) և ուրիշներ գրվել են նախորդ դարերի իրողություններին ժամանակակից, հաճախ էլ ականատես հեղինակների կողմից և պահպանվել ու մեզ են հասել հենց միայն այս երկի միջոցով: Այդ կարևոր առանձնահատկության շնորհիվ 10-րդ դարի այս «Պատմությունը» սկզբնաղբյուրի նշանակություն ունի նախընթաց դարերի համար:

Ի թիվս բազմաբնույթ ու բազմազան այդ աղբյուրների, գրքի մեջ առատորեն ընդ-

գրված են Հայոց Արևելից կողմանց (կոչված նաև Աղվանից) եկեղեցու անցյալին վերաբերող վավերագրեր ու թղթեր: Օգտագործված այդ աղբյուրների մի մասը պահպանվել են, և դրանց համադրությունը «Պատմության» հետ հնարավորություն է տալիս մի կողմից՝ ավելի հստակ ըմբռնելու նյութը, մյուս կողմից՝ պարզելու Դաւիթբեկեան կատարած աշխատանքի բնույթը:

Պատմության երկրորդ գրքի է գլուխն ամբողջապես արտագրված է Հայոց Հովհաննես կաթողիկոսի թղթից¹, սակայն Դաւիթբեկեան այն օգտագործել է՝ կատարելով մասնակի շեղումներ: Հովհաննեսն իր թուղթն ուղղել է «սու Աղուանից եպիսկոպոսունս», Դաւիթբեկեան մոտ դարձել է «սու տէր Աբա»՝ Աղուանից կաթողիկոս, և այդ այն դեպքում, երբ աղբյուրն Աբասին ճանաչում է որպես Պարտավի եպիսկոպոս²:

¹ Հմմտ. Պատմութիւն Աղուանից արարեալ Մովսիսի Կաղանկատուացոյ, Փարիզ, 1860, հ. Ա, էջ 224—229, «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1900, էջ 81—84:

² Պարտավի եպիսկոպոսի փոխարեն Աղվանից կաթողիկոս գրելն Մաղաթիա արքեպիսկոպոս Օրմանյանը բացատրում է նրանով, որ «Աղուանից կաթողիկոսների երկու անուններն ալ անխորի կամ միասին կը գործածէին» («Ազգապատում», Կ. Պոլիս, 1912, էջ 561): Ինչպես հայտնի է, Հայոց կա-

Իսկ որոշ տեղանուններ էլ, որ աղբյուրում աղավաղված են կամ այսօր չեն ընթերցվում, կարելի է վերականգնել Դասխուրանեցու միջոցով: Օրինակ՝ «Մովսեսի, Բ...գատու եպիսկոպոսի, Գրիգորի Կապաղականու եպիսկոպոսի...»³: Այստեղ առաջին տեղանունն ընթերցվելի չէ, իսկ երկրորդն աղավաղված է (քաղաքի անունը Կապաղակ է, որեւէ անհրաժեշտ էր գրել՝ «Կապաղա-

«Գիրք թղթոց»

Այլ են ոմանք, որ ասեն, մինչ երկիր էր Քրիստոս՝ ոչ էր յերկին, և մինչ ի խաչին վերայ էր՝ ոչ էր յաթոռ փառաց և մինչ ի գերեզմանին էր՝ ոչ էր յաջմե հար. զխորհեցողսն այսպես՝ Ազովեմք, և զԻբա, և զԱլակ և զԲարծումա ի Մծբնայ, որք հնազանդեցան ժողովյն Նեստորի, և եղեն պատճառք կորլստեան քազմաց, և զամենեսեան իսկ զայնուսիկ, որ այսմ հաւանին և հնազանդին նոցա ամպարիշտ սպանող վարդապետութեան՝ Ազովեմք:

Եւ առաքեցաք առ ձեզ ի յոխտ մերմէ զայր հաւատարիմ զՄատթեոս քահանայ բերել զգրեալսն մեր առ ձեզ...⁵:

Զուգահեռաբար բերված տեքստերի համեմատությունից դժվար չէ համոզվել, որ նախ՝ Դասխուրանեցին քառացիորեն արտագրել է անմիջականորեն Հովհաննես կաթողիկոսի նամակից, և հետո՝ դուրս թողնված հատվածից թղթի բովանդակությունը չի տուժում:

Երկրորդ գրքի ԽԷ գլխի համար Դասխուրանեցին տեղեկություններ է քաղել «Գիրք թղթոցի» զանազան մասերից⁷ և ապա հանգամանորեն անդրադարձել է հայոց Աբրահամ կաթողիկոսի շրջաբերականին, որից արտագրել է մի ծավալուն հատված: Սա-

թողիկոսության հյուսիս արևելյան թևին կաթողիկոսական իրավունք էր տրվել (Ամենայն Հայոց կաթողիկոսի իրավասության ներքո) 552 թվականին, և առաջին կաթողիկոսն Աբասն է եղել: Հայոց Հովհաննես կաթողիկոսի օրոք (557—574), ըստ երկվորյակի, «Աղվանից կաթողիկոս» արտահայտությունը դեռևս լայն գործածություն չուներ, և այդ առնչությամբ արքեպիսկոպոս Մ. Օրմանյանի արտահայտած կարծիքը հավանական է թվում:

³ Տե՛ս «Գիրք թղթոց», էջ 81:

⁴ Տե՛ս Պատմություն Աղուանից, հ. Ա, էջ 224:

⁵ «Գիրք թղթոց», էջ 88:

⁷ Հմմտ. Պատմություն Աղուանից, հ. Ա, էջ 405—406, «Գիրք թղթոց», էջ 269—271, 277—278, 164—168:

կայ»): Դասխուրանեցու մոտ այդ անունները գրված են անսխալ՝ «Մովսիսի՝ Բաղասատու եպիսկոպոսի, Գրիգորի՝ Կապաղակայ եպիսկոպոսի»⁴:

Հովհաննես կաթողիկոսի թղթի մեջ Դասխուրանեցին միայն աննշան կրճատում է կատարել, այն էլ այնպիսի հատվածում, որից նյութի բովանդակությունն ամենևին չի տուժում:

«Պատմություն Աղուանից»

Են և այլք ոմանք, որ ասեն եթե՝ մինչ ի յերկիր էր Տերն Քրիստոս, յերկինս ոչ էր. և մինչ ի խաչին էր, չէր յաթոռ փառաց. և մինչ ի գերեզմանին էր, ոչ էր ընդ աջմե հօր. զխորհեցողսն այսպես՝ Ազովեմք, և մեք Ազովեմք զամենայն, որք այսմ հաւանեցան կամ հաւանին: Եւ առաքեցաք առ ձեզ յոխտսն մերմէ զայր հաւատարիմ զՄատթեոս քահանայ բերել զգրեալսդ մեր առ ձեզ⁶:

կայն «Աղվանից աշխարհի պատմության» մեջ ներառված այդ հատվածը ունի նկատելի շեղում իր աղբյուրից: Փորձենք պարզել, թե ինչպես է կատարվել այդ:

Աբրահամ կաթողիկոսը հետևյալ կերպ է բացատրել իր շրջաբերականի դրդապատճառը՝ «զՎրաց ասեմ և զԱղուանից, որք զըծահաճոտ սերման նախասացելոցն մեծարանաք ընկալեալ յինքեանս հաստատեցին, զԱստուածապաշտութեան լոկ զկերպարանս ցուցանելով պարզամտաց, և որք սովորութիւն ունին զմիաբանելն ընդ մոսս. և ի զարութեանէն ինքեանց մեա՝ և զնոսս հեռացուցանեն. վասն այսր հարկաւոր համարեցայ գրել»⁸: Ինչպես տեսնում ենք, Աբրահամ կաթողիկոսը լուրջ հիմքեր է ունեցել մտահոգվելու համար: Եվ քանի որ ենթակա աթոռների այդ անմիաբան քայլերի դեմ իրեն նախորդած կաթողիկոսներն արդեն թուղթ են հղել Աղվանքի աթոռին, ինքն էլ նույն բովանդակությամբ թուղթ է ուղարկում Վիրք՝ Կյուրիոն կաթողիկոսին ու նրա եպիսկոպոսներին: Համադրենք այս տեղեկությունները «Պատմության» համապատասխան հատվածի հետ՝ ցույց տալու համար վերջինիս շեղումն իր աղբյուրից:

⁶ Պատմություն Աղուանից, հ. Ա, էջ 228:

⁸ «Գիրք թղթոց», էջ 193:

«Գիրք թղթոց»

Յառաջագոյն քան զմեզ կացեալքն յաստիճանի կաթողիկոսութեան՝ յԱղուանս. իսկ մեր ի Վիրս առ Կիրովն՝ որ կաթողիկոսն անուանի և նորին աթոռակիցս:

...Մեր զնոյն ի վերայ Վրաց հրամայեցաք, ամենևինք մի հաղորդել ընդ մոսա, մի յաղաթս և մի ի կերակուրս, և մի յըմպելիս, մի ի բարեկամութիւն, մի ի դաւանաւորութիւն, մի աղաթիւք երթալով ի խաչն որ ի Մցխիթայի տեղաւքն համբաւի. մի ի Մանգըլեաց խաչն և մի մեր եկեղեցիս զմոսա ընդունել. այլ և ամուսնութեամբ ամենևինք հեռանալ. բայց միայն զնկ ինչ և կամ զնոյ տալ որպէս հրէից: Նոյն հրաման և վստահ Աղուանիցն անշարժ կացեւ, զի պատկառեալ դարձցին ի թիր ճանապարհէն:

...Ապա թէ անխորաքար վարեցի որ հաղորդելով ընդ մոսա և կամակից լիցին սրժութեան հաւատոց նոցա, այնպիսիք նշովեցին մարմնով և ամենայն կենցաղով իրեանց, և որոշեցին ի սրբոյ եկեղեցոյ յԱստուծոյ, և եղիցին խաւարաբնակք և հալիտեմից հրոյն կերակուր⁹:

Աբրահամ կաթողիկոսի մտքերը պարզ են. նա հայտնում է, որ իրենցից առաջ կաթողիկոսական աթոռն զբաղեցնողները, այսինքն՝ նախորդ կաթողիկոսները, քրիստոնէական հավատն անելծ պահելու մասին թողլոթ են հղել Աղվանք, և ահա ինքը նույն գրութիւնը կրկնում է Վրաց աթոռի վերաբերյալ («մեք զնոյն ի վերայ Վրաց հրամայեցաք»): Շըրջաբերականի այս հատվածում Դասխտրանեցին որոշ փոփոխություն է մտցրել՝ իր կողմից լրացնելով աղբյուրի տեղեկությունը (այդ մասին՝ քիչ հետո): Սակայն մի փոքրիկ վրիպակի պատճառով առաջին հայացքից այն թյուր տպավորությունն է ստեղծվում, թե պատմիչը կամեցել է այդտեղ նշել, իբր, Աղվանից նախաթողությունը: Ն. Ա. Կիւնյանը հենց այդպէս էլ ընկալել է գրքի այդ մասը՝ հանդիսալի մեղադրելով Դասխտրանեցուն, թե, իբր, նա խարդախել է աղբյուրի տեղեկությունները՝ հօգուտ Աղվանից նախաթողության¹¹: Մինչդեռ գրքի և նրա աղբյուրի քննությունը միանգամայն հակառակ համոզման է բերում: «Պատմության» այդ հատվածում Աբրահամի ջանքերին ընկերակից է դարձել նաև Աղվանից աթոռը («ընկեցաք զԿիրիոն ըստ հրամանի հարցն մեր և Աղուանք»), որից հետևում է, որ Աբրահամին նախորդած կաթողիկոսներն, իրոք, նման բովանդակությամբ գրություն են ուղարկել Աղվանից աթոռին, և վերջինս Աբրահամի օրոք այն աստիճանի խաղաղ ու միասնական է եղել Ամենայն Հայոց կաթո-

«Պատմութիւն Աղուանից»

Ազդէ նախ յաղուանս. տայ զգիտութիւն և գրէ այսպէս ի թղթին «Եթէ յառաջագոյն քան զհայոց աթոռակալութիւն կացեալ՝ աթոռակալութեանն Աղուանից՝ ընդ մեզ համաձայն գոյով և նոցա կամակցութեամբ նշովեցաք ընկեցաք զԿիրիոն ըստ հրամանի հարցն մեր և Աղուանք. զնոյն ի վերայ Վրաց հրամայեցաք՝ ամենևին մի հաղորդել ընդ մոսա մի յաղթս մի ի կերակուրս, մի յըմպելիս, մի ի բարեկամութեան, մի ի դայեկութեան, մի յաղթս երթալ ի խաչն որ Մցխիթայի տեղեօքն համբաւի, մի ի Մանգըլեաց խաչն, և մի ի մեր եկեղեցիքս զմոսա ընդունիլ, այլ և ամուսնութեամբ ամենևին հեռանալ, միայն զնկ ինչ կամ զնոյ տալ որպէս հրէից: Արդ որ որ անխորաքար հաղորդեցի կամակից լիցնելով անհատնութեան նոցա՝ նշովեցի հոգով և մարմնով և ամենայն կենցաղով իրովք որոշեցի յեկեղեցոյ Աստուծոյ, և եղիցին խաւարաբնակք, և յալիտեմից հրոյն կերակուր...¹⁰:

դիկոսության հետ, որ, նրան միացած, դատապարտել է Կյուրիոնին: Այստեղից բխում է, որ Հայոց և Աղվանից աթոռների միասնությունը շեշտելու նպատակով է, որ պատմիչը աղբյուրի հաղորդածին ավելացրել է հիշյալ տեղեկությունը: Բացի այդ, նա ևս հայտնում է, որ նման գրություն նախ ուղարկվել է Աղվանք և նոր միայն՝ «զնոյն ի վերայ Վրաց հրամայեցաք», ինչպէս որ աղբյուրն է տեղեկացնում: Դեռ ավելին, նա համառոտակի արտագրում է Աբրահամի ամբողջ թողլոթը, որը նույնպէս վկայում է, որ Դասխտրանեցին համակիր է եղել Աբրահամ կաթողիկոսի այդ գրությանը (ավելի ճիշտ՝ նրա ձեռնարկումներին):

Թյուրիմացության տեղիք է տալիս հետևյալ արտահայտությունը՝ «յառաջագոյն քան զհայոց աթոռակալութիւն կացեալ աթոռակալութեանն Աղուանից»: Այդ թյուրիմացությունը կվերանա և հատվածի իմաստը միանգամայն ճիշտ (այն է՝ աղբյուրի հաղորդածի նման) կըմբռնվի, եթե այդտեղ «կացեալ» բառին ավելացնենք «քն» մասնիկը, որը կա աղբյուրում, իսկ «Պատմության» մեջ դուրս է ընկել, անշուշտ, վրիպմամբ կամ գրիչների մեղքով: Նման ձևով վերականգնելով տեքստը, կստանանք՝ «յառաջագոյն քան զհայոց աթոռակալութիւն կացեալ[քն]՝ աթոռակալութեանն Աղուանից» ընդ մեզ համաձայն գոյով և նոցա կամակցութեամբ նշովեցաք, ընկեցաք զԿիրիոն ըստ հրամանի հարցն մեր և Աղուանք: Զնոյն ի

¹¹ Հ. Ն. Ա. Կիւնյան, Մովսէս Դասխտրանեցի (կոչ-

⁹ «Գիրք թղթոց», էջ 193—195:

¹⁰ Պատմութիւն Աղուանից, հ. Ա, էջ 406:

վերայ Վրաց հրամայեցաք...»: Այսինքն՝ «խառաջագոյն քան» Աբրահամը եղած հայոց կաթողիկոսները, հավատն անելով պահեալու մասին թողութիւն են հիշել «աթոռակալութեանն Աղուանից», իսկ ահա այժմ Աբրահամը նույնը կրկնում է Վրաց աթոռի վերահերթալ, այն է՝ Աղվանից հետ «համաձայն գոյով և նոցա կամակցութեամբ», ինչպէս Դասխորանեցին է լրացրել իր կողմից:

Այսքանից հետեւում է, որ անարդարացի է պատմիչին աղբյուրները խարդախելու մեջ մեղադրելը, այն է, իբր, հայոց եկեղեցու նկատմամբ Աղվանից աթոռի գերադասությունը մատնանշելու դիտարկությամբ: Նրան մեղադրանքի անհիմն լինելն ապացուցվում է ոչ միայն վերը կատարված քննությամբ, այլև գրքում պահպանված բազմաթիվ փաստերով, որոնք վկայում են հայոց և Աղվանից եկեղեցիների աճխախտելի միասնությունը¹²:

«Պատմության» և նրա աղբյուրների համապատասխան տեքստերի համադրությունը հնարավորություն է տալիս ոչ միայն երեւելան հանելու այս երկի մասնակի շեղումները, այլև, որ ավելի կարևոր է, հաճախ օգնում է ավելի հստակ ըմբռնելու հենց աղբյուրների նյութը, որի առանձին մասեր հետազայում խաթարվել են: Այս առումով բնորոշ է երկրորդ գրքի ԽԹ գլուխը, որն ամբողջովին քաղագրված է 7-րդ դարի հայ եկեղեցու աշքի ընկնող դեմքերից մեկի՝ Վրթանես Քերթոռի՝ Աղվանից (Արևելից) աշխարհի եպիսկոպոսներին ուղղված պատասխանի թղթից¹³: Համեմատենք այդ հատվածի մի մասը աղբյուրի հետ:

...Քանզի ի ձեճզ գիրն ծանոց մեզ այսպէս, լստ դուզանքնայ զմեճ գոհութիւն իմն ասելոյ ամբաստանութեան ճառ զմարդոյ դոտի կարագունի էր նշանակեալ, և զմեր նմա հաւատալն իբր անիմաստ անմեղի գիրն համբաւեալ, և թէ ոչ թերի՝ այլ լի, նման ձեզ եմք ի հաւատս, զի առաքեալքն և վարդապետքն հասարակ և միապէս աւետարանեցին¹⁴:

...Քանզի ի ձեճզ գիրն ծանոց մեզ լստ դուզանքնայ զմեճ գոհութեանն ամբաստանութեան ճառ զմարդոյ, որ տկարագունի էր նշանակեալ և զմեր նմա հաւատալն իբր անիմաստ, անմեղի իմն համբաւեալ թէ ոչ թերի, այլ լի նման ձեզ եմք ի հաւատքս. զի առաքեալքն և վարդապետքն հասարակ և միապէս աւետարանեցին¹⁵:

Աղբյուրում հանդիպող «դոտի կարագունի», «անմեղի» բառերն անիմաստ ու անհամատեղելի են տվյալ հատվածում և մթագնում են նյութի իմաստը: Իսկ ահա Դասխորանեցու մոտ դրանց դիմաց կարդում ենք «տկարագունի»¹⁶, «անտեղի», և հատվածի իմաստը դառնում է պարզ ու հասկանալի. կամ՝ հիշյալ աղբյուրում կարդում ենք. «Այլ ոչ յոյվութիւն ամբոխից հրապուրեացոյք, բայց ըստ առակողին խրատու մի միտել ընդ բազումս ի չարիս»¹⁷: «Յոյվութիւն ամբոխից» անիմաստ արտահայտությունն աշատել անհասկանալի է դարձնում նախադասության իմաստը: Իսկ ահա «Պատմության» համապատասխան հատվածը տեղեկացնում է. «Այլ և ոչ յոյվութեամբ ոխից հրապուրեացոյք. բայց առակողին խրատու մի միտել ընդ բազումս ի չարիս»¹⁸: Պարզվում է, որ, անշուշտ, գրիչների մեղքով, աղբյուրում «յոյվութեամբ ոխից» ըստովածքի մեջ առաջին բառի վերջին մասը միացել է երկրորդ բառին, և ստացվել է անհեթեթություն («յոյվութիւն ամբոխից»):

Զանազան աղբյուրներից քաղված տեղեկությունները կամ ամբողջական նյութերը «Աղվանից աշխարհի պատմության» մեջ զետեղված են՝ առանց պահպանելու ժամանակագրական կարգը. Վաչեի ու Վաչագան Բարեպաշտի մասին (5-րդ դարի երկրորդ կես) պատմվում է ավելի վաղ, քան Մաշտոցի ու նրա վախճանի մասին (5-րդ դարի առաջին կես), կամ՝ 5-րդ դարի կեսերի ազատագրական պայքարի պատմությունը տրվում է ավելի վաղ, քան՝ գրքերի գյուտի մասին և այլն: Իսկ ահա Հովհաննես կաթողիկոսի թուղթը, Աբրահամի շրջաբերականը, Վրթանես Քերթոռի պատասխան-թուղթը զետեղված են նույն հերթականությամբ,

ված Կաղանկատվացի) և իր Պատմությունն Աղվանից, Վիեննա, 1970, էջ 324:

¹⁴ «Գիրք թղթոց», էջ 198—199:

¹⁶ «Գիրք թղթոց»-ի հրատարակիչը հենց այդպես էլ կրամել ու ծանոթագրել է նույն տեղում՝ էջառաքին:

¹⁸ Պատմությունն Աղուանից, հ. Ա, էջ 416:

¹² Պատմությունն Աղուանից, Ա. գիրք, գլ. Թ, Բ. գիրք, գլ. ԽԵ և այլն:

Այդ մասին տե՛ս Ծ. Վ. Սմբատյան, երկու ճշգրտում Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» բնագրում, Պատմա-քանակապատկան հանդես, Երևան, 1978, № 1, էջ 186—189:

¹³ Արևելից աշխարհի հոգևոր հայրերն Աբրահամ կաթողիկոսի 607 թվականի շրջաբերականի վերաբերյալ հարցում էին արել Ամենայն Հայոց կաթողիկոսությանը, և Վրթանես Քերթոռը, որ կաթողիկոսի տեղապահն էր, պատասխանել էր նրանց:

¹⁵ Պատմությունն Աղուանից, հ. Ա, էջ 414:

¹⁷ Պատմությանի ի Հայոց թղթոյն Աղուանից Վրթանեսի Քերթոռի, «Արարատ», Էջմիածին, 1896, հոկտեմբեր, հավելված, էջ 488:

ինչ որ «Գիրք թղթոց»-ի մեջ է, «Քաղկեդոնի ժողովի մասին հիշատակված է Արքահամի շրջաբերականից՝ առաջ՝ ինչպես «Գիրք թղթոց»-ում: Այս հանգամանքը հուշում է, որ հիշյալ նյութերի համար Դասխորանեցուն աղբյուր է ծառայել հենց «Գիրք թղթոցը» և ոչ թե Աղվանից աշխարհի կաթողիկոսական դիվանում կամ այլուր պահպանված վավերագրերը:

«Աղվանից աշխարհի պատմության» մեջ, ինչպես ասվեց, պատկանելի տեղ են բռնում եկեղեցական թղթերը, վարքագրություններն ու տեսիլները¹⁹, այն աստիճան, որ Ն. Ալիմյանը հավանական է համարում, թե՝ «սուրբերու նշխարներու յայտնութեան և փոխադրութեան պատմութիւնները սկզբնաբար ուրոյն գրութիւններ կենթադրեն, ապա բաժան-բաժան գետեղուած, ըստ ժամանակագրութեան»²⁰: Գրքի մեջ ամփոփված եկեղեցական կանոններն ու այլ վավերագրերը ոչ միայն պատմագիտական կարևոր արժեք են ներկայացնում երկրամասի եկեղեցու պատմության տեսանկյունից, այլև նոր լույս են սփռում աշխարհիկ կյանքի զանազան հարցերի վրա: Նման բնույթի նյութեր առանձնապես առատորեն են ներկայացված 8-րդ դարի սկզբների վերաբերյալ: Պահպանվել են Աղվանից Ներսես-Բակուր կաթողիկոսի և Սպրամ տիկնոջ կողմից քաղկեդոնականություն տարածելու փորձերը, դրա դեմ երկրամասի հոգևոր ու աշխարհիկ տերերի ընդվզելը, այդ ուղղությամբ Հայոց Եղիա կաթողիկոսի ձեռնարկած միջոցառումներն արտացոլող մի շարք վավերագրեր, Ներսես-Բակուրիին հաջորդած Սիմեոն, ապա Միքայել²¹ կաթողիկոսների ընդունած կանոնները: Այդ ամենը Դասխորանեցին հա-

վաքել ու արտագրել է՝ չկարողանալով դրանցից հյուսել մի հետևողական պատմություն, այլ սուկ նշելով իր աղբյուրները՝ «թույլ ժողովոյն Աղուանից առ Եղիա՝ Հայոց կաթողիկոս», «Թույլ Եղիայի», «Կանոնք տեսուն Սիմեոնի» և այլն: Նա անփութիս է պահպանել այդ գրությունների լեզուն ու ոճը, որոնք մատնացույց են անում աղբյուրների հեղինակներին: Այսպես, Եղիա կաթողիկոսի «Գիր պայմանի»-ն հայտնում է՝ «Եւ Եղիա՝ Հայոց կաթողիկոս, հանդերձ իմ եպիսկոպոսք առի գմիալորութեան գիրդ ի ժողովոյդ Աղուանից և ետու զայս պայմանի գիր ձեզ...»²²: Սիմեոն կաթողիկոսի հաստատած կանոններում կարդում ենք՝ «Եւ Սիմեոն՝ շնորհիւն Աստուծոյ Աղուանից կաթողիկոս, ըստ աստուածային պատուիրանաց և կանոնաց այսպէս հրամայեցի...»²³:

«Պատմութիւն Աղուանից» երկի մեջ ամփոփված եկեղեցական վավերագրերի ու թղթերի քննությունը ցույց է տալիս, որ «հ գետէն Երասխայ մինչև ցամուրն Հնարակերտ» տարածված իր հայրենի երկրամասի՝ Արևելից (կամ Աղվանից) աշխարհի եկեղեցու պատմությունը հյուսելու համար Դասխորանեցուն աղբյուր են ծառայել իր մայրենի լեզվով ստեղծված նյութերը՝ Հայոց կաթողիկոսների գրությունները, կանոններ, նամակներ և այլն: Գրքի մեջ այդ նյութերը նա հյուսել է մի ընդհանուր հենքի՝ կատարելով միայն աննշան կրճատումներ, չաղճատելով աղբյուրների պարունակած իմաստը, բայց և ամեն առիթով շեշտելով Հայոց և Աղվանից եկեղեցիների միաբանության հանգամանքը:

վաղ է կաթողիկոս ընտրվել, քան Եղիան, մինչդեռ «Պատմությունը» վկայում է, որ Եղիան է Սիմեոնին կաթողիկոս ձեռնադրել, նոր միայն վերջինիս հաջորդել է Միքայելը: Սիմեոնի ձեռնադրությանը մասնակցել է նաև Ծերո իշխանը, որը Արաբիա է տարագրվել 704 թ. (տե՛ս Պատմութիւն Աղուանից, և. Բ, էջ 45): Ուրեմն, այդ իրողությունը պետք է գետեղել 703—704 թվականների միջև, քանի որ Եղիան ինքը կաթողիկոս է ընտրվել 703 թ. (տե՛ս Մ. Օրմանյան, նշվ. աշխ., և. Ա, էջ 801): Եվ քանի որ Սիմեոնը աթոռակալել է մեկուկես տարի, Միքայելի աթոռակալությունը պետք է հաշվել 705—706-ից:

¹⁹ Պատմութիւն Աղուանից, և. Բ, էջ 25:

²² Պատմութիւն Աղուանից, և. Բ, էջ 25:

¹⁹ Տե՛ս Պատմութիւն Աղուանից, գիրք Ա, գգ. Է, ԺԱ, ԺԹ, Ի—ԻԳ, Լ, գիրք Բ, գգ. Ե, ԻԹ և այլն:

²⁰ Լ. Ն. Ալիմյան, նշվ. աշխ., էջ 76—77:

²¹ Աղվանից այս կաթողիկոսի աթոռակալության տարիները Հր. Բարթիկյանի մոտ ցույց է տրված 702—737 թթ., իսկ Հայոց Եղիա կաթողիկոսինը՝ 703—717 թթ. (Р. М. Бартикан, Армянские источники для изучения истории Павликианского движения, Палестинский сборник, вып. 4(67), Москва, Ленинград, 1959, էջ 136, նաև՝ Պալիկյան շարժման մի քանի աղբյուրների գնահատման շուրջը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957, № 6, էջ 96): Ստացվում է, թե Միքայելն ավելի